

30 ԲԵՆՆՈՒՆ

ՄԷՃՄՈՒՄԻ ԱՆՊԱՐ

30 ԲԵՆՆՈՒՆ

DIRECTION DU JOURNAL MEDJMOUA-IAHBAR 65 Grand'rue de Péra, Taxim, 65	Ապովե ժխարար		Սեմեյիկի 6 այլադ		20 ԲԵՆՆՈՒՆ ԵՎ ԶՈՒՄԱ ԻՐԹԷՍԻ ԿԻՆԵՄԱՏՈԳՐԱՖ ԵՎ ՕԼԻՄՊԻՈՆ Կլանար խին արդաւ ըստարդ օրնուր Թապ խիլիկեմեմ միկարիկ իեմեմ օրնուր:
	Խարանայի խին	Զուր	60	35	
	Թարա խին	85	45	10	

تجمع آخبار

بک اوغلی تقسیم جاده سی و نهم

Մեծ. Յովհաննէս Էփ. Թօրայեան,
Տէր եւ Տեղեւն «Մեմուռաի Ախպար» լրագրոյ.
Մեմուռաի Տէր,
Հանեցէ՛ք, կ'աղայեմ, ներկայս հրատարակել Ձեր
պատուական քերթն մեծաւոր քաղցն մէջ, եւ ըն-
դունիլ շնորհակալութիւնս եւ յարգանքս հաւատ-
սիր:
ԶԵՂ
ԳՐԻԳՈՐ ՈՍԿԵԱՆ
Բերա, 27 Նոյ. (10 Դեկտ. 1912

ԶՐԻ ԶՐԱՐՏՈՒԹԵԱՆ Մ'ԱՌԹԻԻ

Զարմանքով եւ ցաւով կարդացի «Կա-
րողիկի Արմաղան» շաբաթաթիւի 24 Նոյ.
(7 Դեկտ.) և 25 թիւ) պարակն մէջ «Կար-
չական ըստած ժողովոյ հակակաթողիկէ
մէկ արարքը» վերնագրով հրատարակուած
քննադատականն, որոյ ներքեւ ստորագ-
րութիւն չգտնուելուն համար կ'ենթադ-
րուի թէ իւր Գերարգելի խմբագրա-
պետին կողմանէ գրուած է այն: Այդ քնն-
նադատական գրութեան հեղինակը լաւ
որս մը գտած կարծելով, զիս կը հայտնէ,
իւր նոխալ քաւութեան, զոհելով յա-
գուրդ տալու համար իւր և իրեննե-
րուն անօթի կիբերուն. և իւր թէ յար-
մաք զէնք մը ձեռք անցուցած ըլլայ իւր
բարկութիւն մեծաւորաց անիրաւ դատը
պաշտպանելու համար, ազգիս ու իրենց
միջեւ յազուադ խնդիրը բերել անխլա-
բար կեցողանցուցել է կրօնական խնդ-
րոյ մէջ այդ կերպով ծածկել շանայով
իրենց գործած ապօրինութիւնները. մինչ-
դեռ ազգը բեր և բեր անգամ յայտա-
բարած է թէ իւր յազուա խնդիրն երբեք
ո՛ր և է կրօնական հանգամանք չունի և
չկրնար ունենալ, վասն զի այդ խնդիրը
լոկ ազգային վարչական և մատակարա-
րական է, զոր իրենք խելակիւրելով
կրօնական հոգի վրայ բերել ուղղած են.
այսպէս խարկելու համար միտմիտ հաւա-
տացիաւորն: Ուստի, եթէ երբեք անհատ
մը՝ նոյն իսկ Ազգային ժողովոյ անդամ,
կրօնական սխալ մ'ալ գործած ըլլայ, այն
կը մնայ լոկ մասնակի գործուած սխալ մը,
որ կրնայ ի հարկին ուղղուիլ և դարման-
ուիլ: Բայց ասով ազգային դատը չգաղ-
բիր յառաջ երթալէ, ազգին օրինաւոր ի-
րաւունքները ձեռք բերելու համար: Կը
խնդրեմ որ զայս միանգամ ընդ միշտ լաւ
ըմբռնեն և միշտ ըստ այնմ վարուին:

Այս հակիրճ յառաջարկանքն վերջը, ըն-
տելութեամբ կ'անցնի այդ քննադատական
գրութեան ինչ ինչ կէտերուն վրայէն, ա-
նոնց վերադառնալու գիտաւորութեամբ:
Եթէ տախիբ ներկայանայ, և առ այժմ
կը բաւականանամ պարզապէս իմ անմիջ
վերաբերեալ իւր տուած թիւր և անհարկի
մեկնութիւնները մերժելով և փարատելով:
Ուստի, կ'առնում իւր գիտել տուած
երկու կէտերը:

1. Ինչպէս կրնայ ըլլալ, կ'ըսէ, որ
ճշմարիտ կաթողիկէ մը կարենայ «ի սրտէ
մաղթել արժանաւոր յաջորդ մը Ս. Յովն.
Ոսկերիքանի Աթոռոյ» (ասոնք իմ բաւերս
են): Ուրեմն կարելի՞ է եղեր, կ'ըսէ, կա-
թողիկէ մը ընդունիլ թէ այժման յոյն Պա-
արիարքին աթոռը Ս. Յովն. Ոսկերիքանի
Աթոռն է, և թէ անոր վրայ նստողը Ս.
Յովն. Ոսկերիքանի յաջորդն է: —Ասոնք
այլ, ահաւասիկ, Արմաղանցի Գերդ. իմ-
բազարապետին ենթադրութիւնները կամ
մեկնութիւններն են: Ո՞վ զարմանք, թէ
իրեն և թէ ինծի... Աթոռ մը որ, կ'ը-

սէ, հերձակալ է Ս. Պարոտի Աթոռն, որ
Կաթողիկէ հաւատոյ մասերէն մի քանին
ուրանալով հերիքակողութեան մէջ ալ ին-
կած է, Ս. Ոսկերիքանի Աթոռն ըլլա՞յ...
և Կաթողիկէ մը զայս կարենայ պաշտօնա-
պէս դաւանել յոյն Պարիարքանի մէջ!!!
Բայց հոս հաւատոյ դաւանութեան խնդ-
րը չկայ. ահաւասիկ անիրաւ և յան-
դուգն վերագրում մը, զոր ես բացարձա-
կապէս կը մերժեմ: Ո՞վ չգիտեր թէ Ս.
Յովն. Ոսկերիքան, որ Կոստանդնուպոլ-
սոյ յոյն Պարիարք եղած է, (397 թուա-
կանին) բառին բովանդակ նշանակու-
թեամբ ուղղափառ էր, և ջերմ յարած Ս.
Պարոտի Աթոռոյ. և ինչպէս կրնայ են-
թադրուիլ թէ Կաթողիկէ մը զայս չգիտ-
նայ. և ո՞վ չգիտեր թէ Յոյն Եկեղեցին Ս.
Յովնան Ոսկերիքանէն, որքան որ Պատ-
մութենէ կը լիչիւր, մերձաւորապէս հինգ
դար վերջը բաժնուած է Հռոմիայ Եկե-
ղեցիէն, Փոսի պատրիարքութեան օրով,
որով և Ս. Յովն. Ոսկերիքանի վարդա-
պետութենէն չեղած: Ուստի, այսքան
դժուար բան է հասկնալ թէ երբ Կաթո-
ղիկէ մը մաղթանք կ'ընէ որ յոյն Եկեղե-
ցին ունենայ արժանաւոր յաջորդ մը Ս.
Յովն. Ոսկերիքանի Աթոռոյ, ահաւասիկ
իւր ի սրտէ մաղթանքն այն է որ, բազմի-
այն Աթոռին վրայ Հայրապետ մը որ լի-
լայ իրական յաջորդ մը Ս. Յովն. Ոսկերիքան
Հայրապետին և ո՞չ թէ այլոց: Ահա այն է
զոր ես մաղթած եմ, և այս մաղթանքն
կարծեմ թէ պէտք է մասնակցին աւելն ա-
նոնք որ ճշմարիտ կաթողիկէներ են, որպէս
զի Գերարգելի Եկեղեցին լիլայ մի հոս և մի
հովիւ: Այդպէս վասն մեր... Զի միաբա-
նեցիկ զեկեղեցի իւր աւար. (Մաղթանք
առ Ս. Կոյս Աստուածածին): Ինչ է պատ-
ճառն որ դատաւորներս չեն կրցած զայս
հասկնալ: Կը փորձուիմ խորհելու թէ
առեւտր անոնք կարեւորութիւն չեն տար
ո՞չ Եկեղեցւոյ միութեան և ո՞չ կրօնի, և
կ'ուզեն որ միշտ հերձուած ըլլայ Եկե-
ղեցւոյ մէջ և անոր ձգայն միշտ. վասն
զի այդ մեկնութիւնն արգարեւ այդ տե-
սակ նենգաւոր միտք ունեցողները միայն
կրնան յղանալ և միշտ իսկ գիտել. ապա
թէ ոչ պէտք է որ համոզուած լլլային թէ
Կաթողիկէ մը տարբեր մաղթով մաղթանք
մը չկրնար ընել. ինչպէս որ ալ չէ եղած:
Այս խնդրին հետախուզելու եղանակը քաջ
գիտնալու են թէ երկնակայի հաւատակ Լուսն
ԺԳ. Ս. Բանաստեղծութիւնն հաւաքական
թուղթին վրայ, Տ. Եովաքիմ Գ. Պատ-
րիարքն ո՞չ նուազ աշխատեցաւ այդ մի-
ութիւնն յառաջ բերելու, ինչպէս որ շատ
թերթեր ալ գրեցին ժամանակին, բայց
դժբախտաբար չյաջողեցաւ: Հեռաւարար,
իմ մաղթանքն է որ Յունաց Պարիար-
քական Աթոռին վրայ զայս այնպիսի Պա-
արիարք մը որ արժանաւոր յաջորդն ըլ-
լալով Ս. Յովն. Ոսկերիքանի, յաջողի
այդ բաղձանքով միութիւնն իրազորելու:

Այս է ահաւասիկ իմ արձանագրու-
թեան բուն իմաստն, իսկ ասիկ տարբեր
իմաստով զայն մեկնել բացարձակ չարա-
կամութեան արդիւնք միայն կրնայ ըլլալ:
Ուստի, իրաւունք չունիմ արեւոք զար-
մանալու և ցաւելու այսպիսի անգութ ին-
քաթիւրումի մը վրայ, որ կատարուած է
մասնաւոր այնպիսի անձի մը կողմանէ ո-
րոյ ամենէն աւելի ծանօթ են իմ կրօնական
անխախտ համոզումներս և զգացումներս,
և զորս նա շատ առիթներով գոված և բա-

նիւ և գրով հռչակած է պանծանօք: Բայց
ի՞նչ օգուտ. Երբ ի ներքոյ լինիլ բարի և
մաքուր, զամենայն անխաբան ճեւանքի եւ
խոյ առնուիլ ի միս, կ'ըսէ Ս. Թովմաս
Գերարգելի, այսպիսիներու համար անտու-
րակոյս:

Կը հարցնեմ բոլոր միւս աստուածա-
բան վարդապետներու թէ արձանագրու-
թեան այս իմաստին մէջ կա՞յ Կաթողիկէ
Ս. Կրօնքի հակառակ իմաստ մը. եթէ
կայ պատաստ եմ զայն ես առնելու. իսկ
եթէ չկայ, պիտի խնդրէի Արմաղանցի
Գերդ. իմբազարապետին անկեղծաբար ես
առնուլ իւր հրապարակաւ ինձ ըրած ան-
տեղի, անհիմն և յանդուգն վերագրում-
ներն, որոնցմով ի դուր ճշմարտ է զիս ա-
րատաւորի համարձակելով նաեւ հերեհի-
կոս կ'ընէ զիս: Բայց եթէ այդ անկեղծու-
թիւնը գտնէ ցոյց չտայ, կը պարտաւորիմ
ըսել — Դաւեա Տէր զայնուիկ ոյք դասեմ
զիս:

Կ'անցնիմ այժմ քննադատութեան երկ-
րորդ կէտին:

2. Կ'ըսէ թէ երկրորդ միտքս և
զած է Հայցիկով հոգեւոյ նախն հանգիստ
յաւիտեանակա՞ն գրել. որով իւր թէ ըն-
դունած կ'ըլլամ Եկեղեցիներու ստատու-
թիւնը, ինչպէս հետեւցիլ կ'ուզէ քնն-
նադատութեան հեղինակը: Մինչդեռ մեր
Կաթողիկէ քրիստոնէական վարդապետու-
թեան մէջ արթնած ենք թէ, «Արտաքոյ
Ուղղափառ Եկեղեցւոյ չիք փրկութիւն»:
(Թէեւ նոյն իսկ ի ներքոյ Ս. Եկեղեցւոյ.
միայն ուղղափառ տուած բառական չէ
հոգեւոյ փրկութեան համար), սակայն
ինչպէս որ Գերդ. իմբազարապետ վարդա-
պետն ինքն իսկ կը խոստովանի, և շատ
իրաւամբ, թէ «Մենք չենք կրնար ո՞չ Աս-
տուծոյ անհուն գթութիւնը սահմանա-
փակել, կամ անոր ողորմութեան գաղտ-
նեաց իմաստն ու ինչպէս կ'ուսուցանէ
Ս. Թովմաս, և ո՞չ բարի հաւատքի կա-
րկիւղութիւնն ուրանալ», ուստի և կար-
ծեմ թէ մենք ո՞չ միայն կրնանք՝ ալ
կերպով մը պարտաւոր ենք նայել որ ա-
մէն ո՞չ միայն Կաթողիկէ՝ այլ ժամանակ
արտաքոյ Ս. Եկեղեցւոյ ամէն քրիստոն-
եայ անհատ հանգիստ Աստուծոյ անհուն
գթութեան և ողորմութեան, և անով յա-
ւիտեանական հանգիստն արժանանայ: Այս
կերպով Կաթողիկէ եկեղեցիներու մէջ ե-
ղած մաղթանքներ և մատուցուած աղօթք-
ներու զէպերը շատ են, բայց առ այժմ
հարկ չեմ տեսներ զանոնք մի առ մի հոս
չարիկ:

Միայն թէ, քանի որ խնդիրն ի հո-
գեւորս հաղորդակցութեան վրայ է, լու-
սաւորուելու համար իրաւունք ունիմ հոս
հրապարակաւ քաջատրու թիւն պահանջե-
լու որ, առանց աւելի հեռուներն եր-
թալու Աստանայ Առաջնորդ՝ Արհի. Տ.
Պողոս Եպիսկոպոս Թերեզան ինչ մաղթով
քանիցս անձամբ ներկայ գտնուած և Պա-
տարագ ալ մատուցած էր իր Թեմին Հայ
Եկեղեցիներուն մէջ, ինչպէս ներկայ ե-
ղած էր նոյն Պապիկեան Էփեմիոսի համար
կատարուած հոգեհանգիստն արարո-
ղութեան: Իսկ հոս Կաթողիկոս-Պատ-
րիարք ըլլալէ յետոյ, Նորին Ամենապա-
տուութիւնն ինչպէս կրցաւ Տօգթ. Էմէր-
եանի յուղարկաւորութեան իւր կողմանէ
ներկայ գտնուելու համար հրաման ընել
Գերդ. Իսքէնտէրեան Անտոն վարդապետին:

Այս բացարձակութիւնները տալէ յետոյ,
եթէ դարձեալ իբր թէ գալթակցիւր մըտ-
քեր չուղղուին, պատրաստ եմ աստուա-
ծաբաններու վճիռը լսելու:

ԳՐԻԳՈՐ ՈՍԿԵԱՆ

ՆՈՐ ՏՈՍԱՐԻ ԽՆԴԻՐԸ

ՆՈՐ

ԹԵՐԶԵԱՆԻ ՎԵՐՋԻՆ ՀԱՀԱՏԱԳԻՒԹԻՒՆԸ

— X —

Թերզեան՝ տեւնելով որ Հասարակու-
թիւնը վերստին իր հանգարտութիւնը գըա-
նելով, ազգային կեանքի վերագործնու-
մին կը ձեռնարկէ լրջօրէն, կաղմելով ին-
տելգիտ, Ազգային վարչութեան օժան-
դակ ժողովները և մէկ կողմէ Ուսումնա-
բանի Ս. Սահարայ Անկեղանցի, Հա-
սարակից և Մալսուց Խորհուրդները սկսած
են իրենց վստահուած հաստատութիւննե-
րու վիճակը բարոյքել, քունը կարծես
թէ փակցուցել է, և նկատելով նաեւ որ
ցարդ իր սարքած բոլոր ստորին գրգռու-
թիւններն ալ եւս ունէն ազգեցութիւն
չեն գործեր ժողովուրդեան վրայ որ բարո-
րական մեծութիւնն ունեցաւ զինքը մոռ-
նալու, հար ստատանային խորհուրդը հար-
ցուցեր է և իւրեւ նոր գիւտ մը «նոր
ստորաքի խնդիրը գտնելով՝ զայն հրապա-
րակ կը նետէ կրկին անգամ յուղելու հո-
մար հանգարտող միտքերը:

Ու քաջ գիտնալով թէ իր յետին միտ-
քը չուստի կրնան պիտի ելնէ, փոյթ
ունեցիլ է իր կոնգակին մէջ ըսելու թէ
նոր ստորին ընդունիլ լատինականութիւն
չի նշանակել: Անշուշտ, ասիկայ իրմէ
լսելու ոչ ոք պէտք ունի արդէն, և հա-
զարէն իւրեւ մէկ օրինակ լինեք թէ լա-
տին բանաստի գլխանոց կողմ մեր ո՞ր
բանաստի կրցիլ է գտնէ լատին կղերիկ
իւր ժողովուրդին վրայ իր պարտականու-
թիւններու վրայ ունեցած սերն ու գի-
տակցութիւնն ունենալ:

Եթէ եւրոպական ամէն ինչ կապորէն
ընդօրինակելէ ուրիշ բան մը գիտնալիք,
մեր Արեւելեցիին անունն ու համբաւը վա-
ղուց կորսնցուցած չէինք ըլլար միթէ՞:

Բայց Թերզեան ինչով կ'ապահովցնէ
մեզ թէ վաղը քահանայից պատարագի
զգեստներն ալ չպիտի փորձէ փոխել և
Յիսուսեանց կամ Դոմենիկեանց պատարա-
գամատուց մը չի պիտի ընդունի փոխա-
նակ հայկականին, միշտ օտարինը լաւա-
զոյն գտնելու յիմարութեանը մէջ:

Այս խորհրդածութիւնները սակայն
կրնան մեզ հեռացնել մեր այս օրուան
նիւթէն. ուստի վերադառնանք Նոր Տո-
մարին:

Շատ անհիմեթ բան պիտի ըլլար կար-
ծել թէ տակաւին կը գտնուին պնդողներ
որ հին ստմարը ճիշտ է, բայց նաեւ շատ
աւելի անհիմեթ պիտի ըլլար, և է կար-
ծել թէ ամէն նորութիւն, ամէն տեղ և
ամէն ժամանակ կարելի է ներմուծել ա-
ռանց անպատեհութեան:

Թերզեան իր կոնգակին մէջ շատ մեծ
յառաջադիմութիւններ, բարիքներ և նոյն
իսկ Աստուծոյ օրհնութիւնը կը խոստա-
նայ ձեռք բերել իր այս ձախող կարողա-
րութեամբ, մինչ ճիշտ հակառակն է որ
յառաջ պիտի գայ: Եւ տեսնե՞ք թէ ին-
չո՞ւ:

Նախ ըսե՛ք թէ, և ցաւալի է որ ըս-
տիպուած ենք այս դասն ալ տալ Թեր-
զեանի. —Աստուծոյ օրհնութիւնը կը բաղ-
նի ուր խաղաղութիւն և սէր կայ. մինչ
ինք հակառակութեան և ատելութեան
չատուածոյն հարապատ դաւումն է, որով
և չէ կարող Աստուծոյ օրհնութեան միջ-
նորդն ըլլալ:

Պապը Լիլի հուգուգ միւշալլորի օհհտ
պէյ, հէյէթը մուրաիլաասսս իէ պիրիք-
տէ հարէքէթ խոհէք իքէն, ազիմէթինի-
կէրէհէք բոսթասէա թէէլոր իյէմիշ տիր:

